

ՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԶԱՆ

ՀՊՏՀ բանկային գործի և ապահովագրության ամբիոնի դասախոս,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
էլիոսն՝ ruzan.sahakyan@gmail.com

Հեղափոխությունը վերաբերում է արտարժույթային ռիսկի կառավարման ժամանակակից մեթոդներին և ՀՀ առևտրային բանկերում դրանց իրագործման առանձնահատկություններին: Մասնավորապես դիտարկվել են «Արդշինբանկ» ՓԲԸ-ում արտարժույթային ռիսկի կառավարման հիմնական մեթոդները: Դիտարկվել են կիրառվող հիմնական մեթոդներից երկուսը՝ պարամետրային VAR մեթոդը և սթրես-թեստավորումը: Այդ մեթոդների իրագործման ալգորիթմը ներկայացնելու նպատակով ընտրվել են ինքնուրույն պարամետրեր՝ ժամանակային շարք և վստահության միջակայք, և կիրառելով VAR մեթոդը՝ հաշվարկվել «Արդշինբանկում» արտարժույթային ռիսկով պայմանավորված հնարավոր առավելագույն կորուստների ծավալները:

Որպես արտարժույթային ռիսկի գնահատման հաջորդ մեթոդ՝ դիտարկվել է սթրես-թեստավորումը: Այսպես նույնպես ցույց է տրվել մեթոդաբանության կիրառման հաջորդական ալգորիթմը՝ նախապես մշակելով ելակետային սցենարը:

Նշված մեթոդների զուգակցումը պայմանավորված է դրանցում առկա տարբերություններով: VAR-ի դեպքում նպատակը ստանդարտ կորուստների գնահատումն է, իսկ սթրես-թեստավորման դեպքում հազվադեպ, սակայն հավանական հանգամանքներով պայմանավորված կորուստների գնահատումն է: VAR-ի դեպքում նախապես մշակված սցենար գոյություն չունի, իսկ սթրես-թեստավորման հիմքում հիմնականում ընկած են մակրոտնտեսական սցենարները:

Վերլուծության արդյունքում տրվել են համապատասխան գնահատականներ տարբեր մեթոդաբանությունների կիրառմամբ հնարավոր կորուստների, դրանց առաջացման պարամետրերի, ինչպես նաև այդ կորուստների մեծության վրա ներգործող հիմնական գործոնների վերաբերյալ:

Բանալի բառեր՝ արտարժութային ռիսկ, բանկ, կառավարում, VAR , սթրես-թեստ:

Վերջին տարիների ընթացքում միջազգային տնտեսական հարաբերությունների ընդլայնումը, օտարերկրյա ներդրումների, ինչպես նաև միջազգային դրամական փոխանցումների անընդհատ աճող ծավալները, զբոսաշրջության զարգացումը, միջբանկային շուկայի գլոբալացման միտումները, համաշխարհային ասպարեզում ներկայումս դիտարկվող քաղաքական, սոցիալական և տնտեսական ցնցումները, առավել հաճախակի դարձած ֆորս-մաժորային իրավիճակները (պատերազմ, համաճարակ, բնական աղետներ) էապես մեծացնում են առևտրային բանկերի կախվածությունը արտաքին շուկաներից և արտարժույթի փոխարժեքի հնարավոր տատանումներից: Դա պայմանավորում է արտարժութային ռիսկի կառավարման՝ ժամանակին համահունչ մոդելների և գործիքակազմի ընտրության անհրաժեշտությունը՝ բանկի ֆինանսական արդյունքների վրա արտարժութային ռիսկի ներգործությունը նվազագույնի հասցնելու համար: Առավել ևս որ, հանդիսանալով շուկայական ռիսկի տարատեսակ, արտարժութային ռիսկի գրագետ կառավարումը, մասնավորապես ճշգրիտ կանխատեսումների իրականացումը և համարժեք քայլերի ձեռնարկումը հնարավորություն են տալիս ոչ միայն նվազեցնել հնարավոր կորուստները, այլ նաև ստանալ զգալի եկամուտներ:

Հետազոտության սահմաններում կիրառվել են արտարժութային ռիսկի գնահատման VAR, ինչպես նաև սթրես-թեստավորման մեթոդները:

Միասնական դիրքորոշում արտարժութային ռիսկի սահմանման, դասակարգման, բանկային համակարգում վերջինիս գնահատման չափանիշների և օպտիմալ կառավարման վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ գոյություն չունի: Որոշ մասնագետներ դասում են այն ֆինանսական, մյուսները՝ շուկայական ռիսկերին, երրորդները՝ երկուսին էլ միաժամանակ: Պ. Ս. Ռոուզը արտարժութային ռիսկը դասել է ֆինանսական ռիսկերի դասին, ինչն առավել հաճախ հանդիպող տեսակետ է¹: Սակայն ըստ Բանկային վերահսկողության բազելյան կոմիտեի՝ արտարժութային ռիսկը ֆոնդային և տոկոսային ռիսկերի հետ միասին պատկանում է շուկայական ռիսկերի խմբին²:

¹ Роуз П. С., Банковский менеджмент// Издательство Дело ЛТД, Москва, 1995, с. 141-142 http://lib.ysu.am/disciplines_bk/786c47c728e0b180625e2f86d34b0a21.pdf

² Basel Committee on Banking Supervision// Amendment to the Capital Accord to incorporate market risks, Bank for international settlements, November 2005, pg. 1, <https://www.bis.org/publ/bcbs119.pdf>

Տնտեսագիտական բառարանում «արտարժույթային ռիսկ» հասկացությունը բացատրվում է որպես պայմանագիրը կնքելու և դրա իրականացման միջև ընկած ժամանակահատվածում արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցություն գործարքի շահութաբերության վրա: «Արտարժույթային ռիսկի հետ են կապված արտաքին առևտուրը, արտասահմանյան վարկավորումը և ուղղակի ներդրումները»¹:

Հեղինակների մեծ մասը հակված է նրան, որ ֆինանսական կառույցի համար արտարժույթային ռիսկն իրենից ներկայացնում է արտարժույթների փոխարժեքների անբարենպաստ փոփոխության հետ կապված կորուստների ռիսկ:

Արտարժույթային ռիսկը նեղ իմաստով իրենից ներկայացնում է միջազգային գործարքներում մի քանի արտարժույթների օգտագործման արդյունքում փոխարժեքների փոփոխություններից առաջացած կորուստ²:

Վերոնշյալ սահմանումները կարելի է ընդհանրացնել հետևյալ կերպ. արտարժույթային ռիսկն իրենից ներկայացնում է արտարժույթի փոխարժեքի փոփոխության հետ կապված ռիսկ, որն անբարենպաստ հետևանքներ է թողնում բանկային համակարգի վրա՝ դառնալով երկրում տնտեսական և սոցիալական իրավիճակի փոփոխության պատճառ:

Արտարժույթային ռիսկի վերլուծություն VAR մեթոդով: Վերլուծության այս հատվածն իրենից ներկայացնում է «Արդշինբանկ» ՓԲԸ-ի 2021-2022թթ. ընկած ժամանակահատվածում եռամսյակային կտրվածքով արտարժույթների փոխարժեքի փոփոխությունների արդյունքում ակնկալվող հնարավոր առավելագույն վնասի գնահատում: Վերլուծության համար հիմք են ընդունվել ՀՀ ԿԲ-ի պաշտոնական կայքի տվյալների բազայից ստացված ԱՄՆ դոլարի և եվրոյի՝ ՀՀ դրամով արտահայտված օրական փոխարժեքները³:

Նախքան VAR-ի հաշվարկին անցնելն անհրաժեշտ է հստակեցնել որոշ պարամետրեր, դրանք են՝ ժամանակային շարքը, վստահության միջակայքը և ստանդարտ շեղումը: Որպես ժամանակային շարք՝ ընտրվել է յուրաքանչյուր տարվա ընթացքում աշխատանքային 250 օրվա արտարժույթի փոխարժեքները և դրանց հարաբերակցությունը: Մեթոդի կիրառման համար ընտրվել է 95% վստահության միջակայքը: Արդյունքում VAR մեթոդի շնորհիվ դուրս է բերվում

¹ Блэк Дж., под общ. ред. Осадчая И. М., Экономика (Толковый словарь)// Издательство Весь Мир, Москва, 2000, с. 497

² Лаврушин О. И., и др. под общ. ред. Лаврушин О. И., Банковский менеджмент// 5-е издание, КНОРУС, Москва, 2019, с. 324
<https://book.ru/books/932496>

³ <https://www.cba.am/am/SitePages/ExchangeArchive.aspx?DateFrom=2021-01-01&DateTo=2022-12-31&ISOCodes=EUR,USD>

կորստի այն առավելագույն մակարդակը, որը կգրանցվի վատագույն 5% դեպքերում:

Հիմք ընդունելով դիտարկվող արտարժույթների փոխարժեքների օրական փոփոխությունները յուրաքանչյուր տարվա համար տոկոսային արտահայտությամբ (2021թ. , 2022թ.)՝ նախ և առաջ հաշվարկվում է ամեն մի արժույթի փոխարժեքի փոփոխության միջին և ստանդարտ շեղումները:

Միջին շեղումը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.¹

$$\bar{X} = \frac{1}{N} \sum_{i=1}^N X_i ,$$

որտեղ՝

(1)

X_i - արժույթի փոխարժեքի փոփոխությունն է i -րդ օրվա դրությամբ

N - օրերի քանակն է:

Ստանդարտ շեղումը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.²

$$s = \sqrt{\frac{\sum (x_i - \bar{x})^2}{n}} ,$$

(2)

որտեղ՝

$\bar{x}$ - արտարժույթի փոխարժեքի շարքի միջինն է,

x_i - i -րդ օրվա արտարժույթի փոխարժեքն է,

n - օրերի քանակն է:

Աղյուսակ 1.

2021-2022թթ. ԱՄՆ դոլարի և եվրոյի միջինի և ստանդարտ շեղման ցուցանիշները³:

(%)

2021թ.	ԱՄՆ դոլար	Եվրո
Միջին արժեք	-0.034	-0.066
Ստանդարտ շեղում	0.285	0.440
2022թ.		

¹ <https://www.wallstreetmojo.com/sample-mean/>

² <https://www.dummies.com/article/academics-the-arts/math/statistics/how-to-calculate-standard-deviation-in-a-statistical-data-set-169327/>

³ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից կատարված հաշվարկների հիման վրա՝ համաձայն ԿԲ-ի կողմից հրապարակված տվյալների <https://www.cba.am/am/SitePages/ExchangeArchive.aspx?DateFrom=2021-01-01&DateTo=2022-12-31&ISOCodes=EUR,USD>

Միջին արժեք	-0.080	-0.104
Ստանդարտ շեղում	0.473	0.807

Ստացված արդյունքներից երևում է հետևյալ օրինաչափությունը. և՛ ԱՄՆ դոլարի, և եվրոյի ստանդարտ շեղման արդյունքները 2022թ. գրանցել են աճման միտում՝ 2021թ. դոլարի դեպքում 0,19%, եվրոյի դեպքում՝ 0,37%, ինչը պայմանավորված է 2022թ. փոխարժեքների կտրուկ տատանումներով:

Արտարժույթային ռիսկ բանկերում առաջանում է դիտարկվող ժամանակահատվածի կտրվածքով արձանագրված բաց արտարժույթային դիրքի առկայության պայմաններում: Ընդ որում երկար դիրքի դեպքում՝ արտարժույթի փոխարժեքի նվազման պայմաններում, կարճ դիրքի դեպքում՝ աճի:

Արտարժույթային ռիսկը «Արդշինբանկի» 2021թ. և 2022թ. միջանկյալ հաշվետվությունների հիման վրա գնահատելու համար յուրաքանչյուր արտարժույթի դեպքում գնահատվել է բանկի եռամսյակային արտարժույթային դիրքը, որով էլ պայմանավորված է վստահության միջակայքի գործակցի ընտրությունը¹:

VAR մեթոդի հաշվարկման նպատակով յուրաքանչյուր արտարժույթի համար գնահատվել է փոխարժեքների փոփոխությունների հետևանքով արտարժույթային ռիսկի օրական VAR ցուցանիշը՝ կիրառելով հետևյալ բանաձևը.

$$VAR = kxbxPxN, \quad (3)$$

որտեղ՝

k – վստահության միջակայքին համապատասխանող գործակիցն է,

b – արտարժույթի փոխարժեքի ամենօրյա փոփոխության ստանդարտ շեղումն է,

P – բաց արտարժույթային դիրքի մեծությունն է,

N – օրերի քանակն է²:

Քանի որ 2021թ. «Արդշինբանկի» ԱՄՆ դոլարով արտահայտված արտարժույթային դիրքը բոլոր եռամսյակների ընթացքում եղել է կարճ, արտարժույթի օրական VAR ցուցանիշը հաշվարկվել է 95%, իսկ եվրոյինը, որը եղել է երկար, հաշվարկվել է 5% վստահության միջակայքի համար:

¹ «Արդշինբանկ», Միջանկյալ հաշվետվություններ՝ 2021թ. և 2022թ.,

[https://www.ardshinbank.am/reports/interim-](https://www.ardshinbank.am/reports/interim-reports?field_year_value%5Bvalue%5D%5Byear%5D=2021)

[reports?field_year_value%5Bvalue%5D%5Byear%5D=2021](https://www.ardshinbank.am/reports/interim-reports?field_year_value%5Bvalue%5D%5Byear%5D=2021)

² Звонова Е. А., под общ. ред. Горбунова О. А., Прудникова А. А., Белянчикова Т. В., Асон Т. А., Игнатова О. В., Валютные операции банка// Издательство КноРус, Москва, 2020, с. 167, <https://book.ru/books/935900>

2022թ. ԱՄՆ դոլարի, ԱՄՆ եվրոյի եռամսյակային դիրքերը եղել են ինչպես կարճ, այնպես էլ երկար, օրական VAR-ը հաշվարկվել է վստահության երկու միջակայքերի համար:

Դիտարկվող ժամանակահատվածի կտրվածքով օրական VAR-ի ցուցանիշներն ամփոփված են աղյուսակ 2-ում:

Օրական VAR-ի գծով ստացված ցուցանիշների հիման վրա դուրս է բերվում եռամսյակային VAR-ը (աղյուսակ 3), հետևյալ բանաձևով՝

$$VAR_{\text{եռամսյակային}} = VAR_{\text{օրական}} \times \sqrt{N}$$

(4)

որտեղ՝

$\sqrt{N}$ – եռամսյակի ընթացքում աշխատանքային օրերի թիվն է (ամսվա ընթացքում 21 աշխատանքային օր):

Աղյուսակ 2.

«Արդշինբանկի» VAR ցուցանիշը 2021-2022թթ. դրությամբ (օրական կտրվածքով)¹:

(%)

	2021թ.				2022թ.			
	31.03	30.06	30.09	31.12	31.03	30.06	30.09	31.12
ԱՄՆ դոլար	0,287	0,287	0,287	0,287	0,793	0,566	0,793	0,793
Եվրո	-0,779	-0,779	-0,779	-0,779	-1,372	-1,372	-1,372	1,254

Արդյունքները վկայում են, որ որքան էլ 2021թ. տեղի են ունեցել արտարժույթի փոխարժեքի տատանումներ, արտարժույթային ռիսկի օրական VAR-ը ԱՄՆ դոլարի, ԱՄՆ եվրոյի համար չի գերազանցել 0,8%-ը: 2022թ. համար, հակառակը, ակնհայտ են եվրոյի հաճախակի տատանումները, ինչն էլ հանգեցրել է օրական VAR-ի 1,37% կորուստներին, ինչն էլ ամենաբարձր ցուցանիշն է դիտարկվող տարիների ընթացքում:

¹ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից կատարված հաշվարկների հիման վրա՝ համաձայն «Արդշինբանկի» 2021թ. և 2022թ. միջանկյալ հաշվետվությունների տվյալների:

[https://www.ardshinbank.am/reports/interim-](https://www.ardshinbank.am/reports/interim-reports?field_year_value%5Bvalue%5D%5Byear%5D=2021)

[reports?field_year_value%5Bvalue%5D%5Byear%5D=2021](https://www.ardshinbank.am/reports/interim-reports?field_year_value%5Bvalue%5D%5Byear%5D=2021)

Աղյուսակ 3.

«Արդշինբանկի» VAR ցուցանիշը 2021-2022թթ. դրությամբ (եռամսյակային կտրվածքով):

(%)

	2021թ.				2022թ.			
	31.03	30.06	30.09	31.12	31.03	30.06	30.09	31.12
ԱՄՆ դոլար	2.279	2.279	2.279	2.279	-6.294	4.491	-6.294	-6.294
Եվրո	-6.184	-6.184	-6.184	-6.184	-10.894	-10.894	-10.894	9.956

Արտարժույթների փոխարժեքների տատանումներով պայմանավորված՝ եռամսյակի կորստի գնահատված չափը բերվել է դրամական արտահայտության՝ յուրաքանչյուր եռամսյակի VAR-ը բազմապատկելով բանկի միջանկյալ հաշվետվությունում տվյալ արտարժույթի առկա եռամսյակային զուտ դիրքով (գծապատկերներ 1,2):

Գծապատկերներում ներառված տվյալները ցույց են տալիս այն առավելագույն կորստի մակարդակը, որը բանկը կունենար տվյալ արտարժույթային դիրքի և դրան համապատասխան վստահության միջակայքի պայմաններում:



Գծապատկեր 1. ԱՄՆ դոլարի 2021թ. և 2022թ. համեմատական եռամսյակային VAR (հազ. դրամ):

¹ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից կատարված հաշվարկների հիման վրա՝ համաձայն «Արդշինբանկի» 2021թ. և 2022թ. միջանկյալ հաշվետվությունների տվյալների:

https://www.ardshinbank.am/reports/interim-reports?field_year_value%5Bvalue%5D%5Byear%5D=2021

² Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից կատարված հաշվարկների հիման վրա՝ համաձայն «Արդշինբանկի» 2021թ. և 2022թ. միջանկյալ հաշվետվությունների տվյալների:



Գծապատկեր 2. Եվրոյի 2021թ. և 2022թ. համեմատական եռամսյակային VAR (հազ. դրամ):

Արտարժույթային ռիսկի կառավարում սթրես-թեստի միջոցով: Սթրես-թեստի միջոցով հաշվարկների իրականացման նպատակով, որպես վերլուծության ժամանակային միջակայք, ընտրվել են նախորդ 14 տարիները: ԿԲ-ի տվյալների հիման վրա 14 տարվա կտրվածքով (2008-2022թթ.)² հաշվարկվել է ամեն տարվա յուրաքանչյուր օրվա փոխարժեքի փոփոխությունը՝ նախորդ տարվա միննույն օրվա նկատմամբ՝ բացահայտելով և՛ ԱՄՆ դոլարի, և՛ Եվրոյի գծով փոխարժեքների ամենամեծ արժեզրկումն ու արժևորումը %-ային արտահայտությամբ եռամսյակային կտրվածքով (հաշվի առնելով, որ VAR-ը հաշվարկվել է եռամսյա կտրվածքով): Հաշվարկների արդյունքում, հիմք ընդունելով նախորդ տարիների ճգնաժամային իրավիճակներում արտարժույթի փոխարժեքների նման փոփոխությունները և դիտարկելով հետագա տարիների ընթացքում դրանց կրկնվելու հավանականությունը, որպես սթրես-սցենար դիտարկվել է հետևյալ իրավիճակը. *առաջիկա տարվա ընթացքում եռամսյակային կտրվածքով ԱՄՆ դոլարի փոխարժեքի փոփոխության օրական ամենամեծ արժևորումը կարող է հասնել առավելագույնը 25,5%, իսկ արժեզրկման դեպքում՝ -17,9%, եվրոյի պարագայում արժևորման ամենաբարձր ցուցանիշը՝ 29,7%, իսկ վերջինիս ամենախորը արժեզրկումը մինչև 26,4%:*

https://www.ardshinbank.am/reports/interim-reports?field_year_value%5Bvalue%5D%5Byear%5D=2021

¹ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից կատարված հաշվարկների հիման վրա՝ համաձայն «Արդշինբանկի» 2021թ. և 2022թ. միջանկյալ հաշվետվությունների տվյալների:


https://www.ardshinbank.am/reports/interim-reports?field_year_value%5Bvalue%5D%5Byear%5D=2021

² ԿԲ, ԱՄՆ դոլարի և Եվրոյի փոխարժեքների ամփոփ ցուցանիշներ, 2008-2022թթ.,

<https://www.cba.am/am/SitePages/ExchangeArchive.aspx?DateFrom=2008-01-01&DateTo=2022-12-31&ISOCodes=EUR,USD>

Կիրառելով Conditional VAR մեթոդը¹ և հիմք ընդունելով ճգնաժամային իրավիճակներում արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների՝ նման ձևով հանդես գալու հավանականությունը, հաշվարկվել է, թե եռամսյակի ընթացքում որքան կկազմի օրական VAR արժեքը: Վստահության միջակայքը ընտրված է 95-99,9%: Շարքի միջին ցուցանիշի դիտարկվել է որպես միջին սցենար: Ավելացնելով դրան շարքի ստանդարտ շեղումը՝ հանգել ենք խիստ սցենարի ցուցանիշին:

Սթրես-թեստի արդյունքները ներկայացված են գծապատկեր 3-ի միջոցով:



Գծապատկեր 3. Սթրես-թեստի արդյունքները²:

Կատարված վերլուծությունները հանգեցնում են հետևյալին.

1.«Արդշինքանկում» արտարժույթային ռիսկի կառավարումը հիմնականում իրականացվում է առավելապես VAR մեթոդի, արտարժույթի տնօրինման նորմատիվի և սթրես-թեստերի միջոցով:

2.Այս հետազոտության շրջանակում կիրառելով պատմական VAR սցենարը՝ դուրս են բերվել փոխարժեքային տատանումներից հավանական կորստի չափն ըստ եռամսյակների: Հաշվարկների արդյունքում հստակ ուրվագծվել են այն օրինաչափությունները, որ առկա են բաց արտարժույթային դիրքի (կարճ կամ երկար), փոխարժեքի փոփոխության (արժևորում կամ արժեզրկում) և ակնկալվող կորստի մեծության միջև:

¹ https://www.investopedia.com/terms/c/conditional_value_at_risk.asp

² Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ համապատասխան հաշվարկների հիման վրա:

3. Նախորդ տարիների ընթացքում, տարբեր իրավիճակներով պայմանավորված, փոխարժեքային տատանումներն արձանագրելով, ինչպես նաև դրանց հավանական կրկնության (նույնիսկ՝ առավել վատթար սցենարով) հնարավորությունը հաշվի առնելով՝ առաջիկա մեկ տարվա կտրվածքով իրականացվել է ԱՄՆ դոլարի և եվրոյի տատանումներով պայմանավորված կորուստների կանխատեսում: Այդ նպատակով կազմվել է սթրես-թեստ՝ հիմքում դնելով միջին և խիստ սցենարներ նախատեսող պարամետրեր՝ կապված ֆորմաժորային իրավիճակներում դիտարկվող արտարժույթների հնարավոր առավելագույն արժևորման և արժեզրկման հետ: Յուրաքանչյուր առանձին իրավիճակի համար (միջին սցենար՝ արժևորում և արժեզրկում, խիստ սցենար՝ արժևորում և արժեզրկում) հաշվարկվել է ակնկալվող կորստի չափը՝ կիրառելով Conditional VAR մեթոդը:

4. Հետազոտության սահմաններում ստացված արդյունքները կարող են հիմք հանդիսանալ բանկի ռազմավարական ծրագրերի մշակման, ինչպես նաև ռիսկերի կառավարման բնագավառում կառավարչական որոշումների ընդունման բնագավառում: Մասնավորապես դա վերաբերում է արտարժույթային դիրքերի կարգավորմանը (տոկոսադրույքների փոփոխություն, ածանցյալ գործիքների կիրառում և այլն): Ընդ որում՝ իրավիճակային փոփոխությունների նկատմամբ արագ և համարժեք արձագանքը հնարավորություն կտա ոչ միայն նվազագույնի հասցնել հնարավոր կորուստները, այլ նաև ստանալ զգալի եկամուտներ:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենք, ընդ. 24.11.2004թ. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=50589>:
2. Блэк Дж., под общ. ред. Осадчая И. М., Экономика (Толковый словарь)// Издательство Весь Мир, Москва, 2000, 1215 с.
3. Звонова Е. А., под общ. ред. Горбунова О. А., Прудникова А. А., Белянчикова Т. В., Асон Т. А., Игнатова О. В., Валютные операции банка// Издательство КноРус, Москва, 2020, 210 с. <https://book.ru/book/935900>
4. Лаврушин О. И., Валенцева Н. И. и др., под общ. ред. Лаврушина О. И., Банковское дело// 12-е издание, Издательство КНОРУС, 2018, 800с. <https://book.ru/books/925842>
5. Лаврушин О. И., Ларионова И. В., Поморина М. А., Валенцева Н. И., Амосова Н. А., Терновская Е. П., Авис О. У., Косарев В. Е., Мешкова Е. И., Ольхова Р. Г., Соколинская Н. Э., Дадашева О. Ю., Рудакова О. С., Мартыненко

Н. Н., Лялькова Е. Е., под общ. ред. Лаврушин О. И., Банковский менеджмент// 5-е издание, КНОРУС, Москва, 2019г., 414 стр. <https://book.ru/books/932496>

6. Роуз П. С., Банковский менеджмент// Издательство Дело ЛТД, Москва, 1995, 743 с.

http://lib.ysu.am/disciplines_bk/786c47c728e0b180625e2f86d34b0a21.pdf

7. Basel Committee on Banking Supervision// Amendment to the Capital Accord to incorporate market risks, Bank for international settlements, November 2005 <https://www.bis.org/publ/bcbs119.pdf>

8. Basel Committee on Banking Supervision Internatioanal Convergence of Capital Measurement and Capital Standarts// Bank for international settlements, June 2006 <https://www.bis.org/publ/bcbs128.pdf>

9. <https://www.cba.am/am/SitePages/ExchangeArchive.aspx?DateFrom=2021-01-01&DateTo=2022-12-31&ISOCodes=EUR,USD>

10. https://people.duke.edu/~rnau/Decision411_2007/411log.htm

11. <https://www.wallstreetmojo.com/sample-mean/>

12. <https://www.dummies.com/article/academics-the-arts/math/statistics/how-to-calculate-standard-deviation-in-a-statistical-data-set-169327/>

13. https://www.ardshinbank.am/reports/interim-reports?field_year_value%5Bvalue%5D%5Byear%5D=2021

14. <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>

15. <https://www.cba.am/AM/ppperiodicals/Portfolio%2031.12.21%20N.pdf>

16. https://www.investopedia.com/terms/c/conditional_value_at_risk.asp

17. https://querywords.ru/financial-encyclopedia/c/conditional_value_at_risk

THE MODERN METHODS OF FOREIGN EXCHANGE RISK MANAGEMENT IN COMMERCIAL BANKS OF THE REPUBLIC OF ARMENIA

SAHAKYAN RUZAN

PhD in Economics, Associate Professor

Chair of banking and Insurance, ASUE

e-mail: ruzan.sahakyan@gmail.com

The research refers to the modern methods of foreign exchange risk management and the peculiarities of their implementation in the commercial banks of the Republic of Armenia. In particular, the main methods of foreign exchange risk management in "Ardshinbank" CJSC were considered. Two of the most widely used methods were considered: Historical VAR method and Stress testing. In order to

represent the algorithm for the implementation of these methods, the following parameters were selected – time series and confidence interval, and the VAR method was used in "Ardshinbank" to calculate the volumes of possible maximum losses caused by foreign exchange risk.

Stress testing was considered as the next method of foreign exchange risk assessment. Here was also shown the sequential algorithm of applying the methodology, having developed the initial scenario in advance.

The combination of the mentioned methods is due to their differences. In the case of VAR, the goal is to estimate standard losses, and in the case of Stress testing, it is to estimate losses due to rare but probable circumstances. In the case of VAR, there is no pre-developed scenario, and the stress-testing is mainly based on macroeconomic scenarios.

As a result of the analysis, using different methodologies, appropriate assessments were given regarding the possible losses, the causes of their occurrence, as well as the main factors affecting the magnitude of these losses.

Keywords: foreign exchange risk, bank, management, VAR, stress-test.

СОВРЕМЕННЫЕ МЕТОДЫ УПРАВЛЕНИЯ ВАЛЮТНЫМ РИСКОМ В КОММЕРЧЕСКИХ БАНКАХ РА

СААКЯН РУЗАН

*Кандидат экономических наук, доцент
Кафедра банковского дела и страхования АГЭУ
электронная почта: ruzan.sahakyan@gmail.com*

Исследование касается современных методов управления валютным риском и особенностей их проявления в коммерческих банках РА. В частности, рассмотрены основные методы управления валютным риском в ЗАО «Ардшинбанк». Рассмотрены два основных метода: исторический VAR и стресс-тестирование. В целях описания алгоритма реализации данных методов выбраны параметры: временной ряд и доверительный интервал. С применением метода VAR рассчитан объем возможных максимальных потерь от валютного риска.

Следующий метод оценки валютного риска – стресс тестирование. Здесь также описан алгоритм применения методологии, предварительно разработав исходный сценарий.

Совмещение вышеуказанных методов обусловлено наличием определенной разницы между ними. Целью применения метода VAR является оценка стандартных потерь, а стресс-тестирование выявляет объемы потерь при реализации редких, но вероятных событий. При методологии VAR отсутствует заранее разработанный сценарий, в то время, как основой стресс-тестирования служат, в основном, макроэкономические сценарии.

В результате анализа даны соответствующие оценки возможных потерь в результате применения разных методологий, причин формирования, а также факторов, влияющих на величину указанных потерь.

Ключевые слова: валютный риск, банк, управление, VAR, стресс-тест.

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 14.10.2023թ.:

Հոդվածը գրախոսվել է 28.10.2023թ.:

Ընդունվել է տպագրության 17.05.2024թ.: